են լինել ստրուկ: Նա ամէն օր տէրտէրից այդ խօսքերն է լսում՝ «Ով որ քեզ կծեծէ, դու նրան խոնարհութիւն արա, ով որ քո վերարկուն կխլէ, դուն շապիկդ էլ տուր. եթէ ձախ երեսիդ զարկեն, աջն էլ դարձրու, ամենեւին սուր չբանեցնես, որովհետեւ սուր բարձրացնողը սրով կը մեռնի, դրա համար էլ մեր տէրը Պետրոսի ձեռքից սուրը խլեց»: Ո՞վ է իմանում, հազար ու մէկ այսպիսի յիմարութիւններով լցնում են խեղճ մարդու զլուխը, եւ նա դառնում է ոչ թէ մարդ, այլ «կոյր հաւ», որպէս քուրդն է ասում:

— Իսկ մեր կարդացողներն այդ յիմարութիւնները կոչում են կրթութիւն, դաստիարակութիւն...

— Բայց քուրդը, պարսիկը, թուրքը, որոնք մեր հացը մեր ձեռքից խլում են, որոնք մեր արիւնը ծծում են, նրանք բոլորովին ուրիշ եղանակով են դաստիարակւում: Ընտանիքի մէջ աճում, զարգանում են նրանք, ինչպէս վայրենի ծառը մայր հողի վրայ արմատ է գցում, ազատ, արձակ ճիւղեր է բարձրացնում, եւ ոչինչ չէ ճնշում, ոչինչ չէ նոազեցնում նրա աճելութիւնը: Ղպրոցի մէջ նրանք կարդացած գրքերը մեր Այսմաւուրքը եւ Նարեկը չեն. նրանք սովորում են իրանց ազգի հերոսների պատմութիւնը, ոգեւորւում են իրանց բանաստեղծութիւններով, որը մեծ մասամբ նոիրոած է զանազան հսկաների, փեհլեւանների քաջագործութիւններին: Նրանց կրօնքը եւ կրօնական գրքերը մինչեւ անգամ բանաստեղծութիւն են, որոնց մէջ շնչում է պատերազմական ոգին: Որովհետեւ սկսեալ Մուհամմեդից մինչեւ խալիֆաները, իմամները եւ այլն, — բոլորը պատերազմող մարդիկ էին: Լսի՛ր, ի՞նչ է քարոզում մահմեդականի մօլլան՝ «Ով որ քեզ կծեծէ, դու էլ նրան ծեծիր. նա, որ քեզանից չէ, նրա ապրանքը քեզ հալալ է, կռիւ տու՛ր թշնամուդ հետ, այն կռոի մէջ թէ սպանես, դրախտը կերթաս, թէ սպանես, դարձեալ դրախտը կերթաս»: Բոլորովին հակառակն է խօսում նա, ինչ որ ասում է հայի տէրտէրը մեզ:

— Մուհամմեդը տոեց իր ժողովրդին սուր, բայց Քրիստո՛ս — խաչը. ահա զանազանութիւնը մեր եւ մահմեդականների մէջ:

— Արիւն թափելը, ուրիշի ապրանք խլելը՝ վատ բանէր են.բայց շատ հաճելի էլ չէ, որ մարդ թոյլ տա իր արիւնը թափեն, իր ապրանքը խլեն, իր զաւակները հացից զրկեն: Ամբողջ աշխարհը մէկ կռոի դաշտ է, ուր զօրեղն անզօրին կլանում է, ոչնչացնում է. թէ ուզում ես ուրիշի կերակուր չդառնաս, պէտք է քո գլուխը պահելու ճարը գիտենաս: Միթէ՞ գայլի հետ կարելի է գառն դառնալ. — գազանի հետ պէտք է գազան լինել, որ կարողանաս գլուխդ պահել: Շունը, որ շուն է, երբ նրան փոքր-ինչ նեղացնում ես, կծում է: Կատուն, որ կատու է, թէ նեղացնես, կճանկռտէ, նրա համար, որ նրանց